№ 73 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 30

1890

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 30 № 73

NEUBAU 23 8 Kreuzer 1890 WIEN

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

## ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

# „ՄՇԱԿ"

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի.

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդական գրադարաններ և ընթերցարաններ. Նամակ Մեծ-Ղարաքլիսայից. Նամակ Աղստաֆայից. Նամակ Գօրիսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մխիթարական երևոյթ. Սալմաստ և մի գիծ այդտեղի կեանքից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նաթաքաղաքի կեանքից.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐ

IV

Ժողովրդական էժանագին գրադարան-ընթերցարանները կարելի է հիմնել երկու կերպ, կամ մասնաւոր մարդկանց ծախսով, և կամ մի քանի մարդկանց ընկերակցութեամբ, ընկերական սկզբունքների հիման վրա:

Ներկայումս դժուար է ասել, որ մասնաւոր մարդիկ, իրանց մասնաւոր միջոցներով նախաձեռնող լինէին էժանագին գրադարաններ հիմնելու գործում, որովհետև այդ գրադարանները ոչ թէ որ և է նիւթական շահ չեն տայ հիմնողներին, այլ գուցէ միայն մի քանի ծախսերի մէջ էլ կը դցեն:

Մեր հասարակութեան մէջ մասնաւոր մարդիկ սովորաբար իրանց ոյժը և դրամը գործ են դնում այնպիսի ձեռնարկութիւնների վրա, որոնցից յայտնի շահ կայ: Հասարակական հանրաշահ ձեռնարկութիւնների վրա չէ ծախսվում համարեա թէ ոչ մի մասնաւոր դրամագլուխ: Այժմ անկասկած մեր հասարակութեան մէջ կը գտնվեն մարդիկ,—և գտնվում էլ են,—որոնք իրանց նիւթական միջոցները գործ կը դնեն դիցուք մի դպրոց բանալու, կամ մի լրագիր հիմնելու համար, որովհետև այժմ թէ դպրոցը և թէ լրագիրը կարող են յայտնի հանգամանքների մէջ շահաւէտ ձեռնարկութիւն դառնալ. մինչդեռ առաջ, երբ թէ լրագրութիւնը և թէ դպրոցը նոր էին սկսում գոյութիւն առնել մեր մէջ, մասնաւոր շահադիտական նպատակներ ունեցող անձինք դպրոցի կամ լրագրի վրա դրամագլուխ դաղեցնելը նոյն իսկ խելացնորութիւն կը համարէին:

Նոյնը կարելի է ասել էժանագին գրադարանների մասին: Այժմ, երբ այդ հիմնարկութիւնները նոր պէտք է գոյութիւն առնեն մեր մէջ, և երբ դրանք որ և է նիւթական շահի աղբիւր լինել չեն կարող, դժուար է սպասել, որ մասնաւոր մարդիկ ձեռնարկէին գրադարաններ հիմնելու գործին: Մասնաւոր մարդը ներկայումս միայն այն դէպքում կարող է այդպիսի հիմնարկութիւնների ձեռնարկող լինել, երբ նա ոգևորված կը լինի գործի հասարակական կողմով, այսինքն երբ նա կը ցանկանայ իր մասնաւոր նիւթական միջոցները և ջանքերը ծախսել յօգուտ հասարակութեան, յօգուտ ամբոխի մէջ ընթերցանութիւն տարածելու գործին:

Մենք չենք ուրանում, որ այդպիսի հասարակական ձգտումներով ներշնչված մարդիկ կարող են դուրս գալ և հիմնել էժանագին գրադարաններ, բայց դրանք կը լինեն բացառութիւններ. իսկ մի, կամ մի երկու ծաղիկով գարուն չի լինի.... Ասում ենք բացառութիւններ կը լինեն, որովհետև շատ քիչ է պատահում, որ մեր հասարակութեան նման մի հասարակութեան մէջ դրամատէրերը, կամ ուրիշ խօսքով հարուստ դասակարգը հանդէս գային իբրև հասարակական գործիչ, իբրև հասարակական նպատակներ ունեցող հիմնարկութիւնների նախաձեռնող:

Այդպիսի դէպքերում, երբ գործը դեռ նորութիւն է, երբ նոյն իսկ այդ նոր գործի գաղափարը և սկզբունքը պէտք է արծարծել, պաշտպանել, երբ դեռ պէտք է համոզել մարդկանց, թէ ահա մի գործ, որը մեծ նպաստ կարող է տալ ժողովրդի զարգացման, այդպիսի դէպքերում, ասում ենք, գլխաւոր գործիչը, ինչպէս և համանման բոլոր միւս դէպքերում, պիտի լինի այն տարրը, որը ոգևորված է գաղափարով, և իր սիրած գաղափարը իրականացնելու համար պէտք է աշխատէ, որ միջոցներն էլ ինքը գտնէ: Այդ տարրը—ինտելիգէնտ երիտասարդութիւնն է:

Ժողովրդական էժանագին գրադարան-ընթերցարան հիմնելը, իբրև մի նոր գործ, անմիջապէս կախված է մեր ինտելիգէնտ ոյժերից, մեր երկու սեռի ինտելիգէնտ երիտասարդութիւնից, թէ գլխաւոր քաղաքներում և թէ գաւառներում, որովհետև ուրիշ ոչ մի դասակարգ և ուրիշ շրջանին պատկանող մասնաւոր անձինք այդ գործի ոչ գլուխ կը կանգնեն, և ոչ էլ կարող են կանգնել: Նախ պէտք է համոզվել, որ ժողովրդի համար այժմ անհրաժեշտ են էժանագին գրադարանները—և ամենից շուտ այդ բանի մէջ համոզվողը և այդ հարցով ոգևորվողը կը լինի անպայման մեր հասարակութեան մէջ ինտելիգէնտ տարրը: Ապա պէտք է ընդունակ լինել հասկանալու, թէ ինչպէս ձեռնարկել գործին և ինչ ճանապարհով առաջ տանել նրան.—այդ էլ միայն ինտելիգէնտ մարդիկ կարող են հասկանալ, որովհետև գրադարան-ընթերցարան հիմնելը դուքան կամ ճարան հիմնել չէ, և գործին ձեռնամուխ լինելու, կամ մանաւանդ գործին նախաձեռնող լինելու համար պէտք է հասկանալ, թէ ժողովուրդը ինչ կարող է կարդալ, ինչպէս կը կարդայ և ինչ միջոցներով կարելի է նրան գրաւել դէպի ընթերցանութիւնը:

Տարաբաղդաբար մեր ինտելիգէնտ շրջանները, մեր ուսում առած երիտասարդները և օրիորդները, որոնք, մանաւանդ գաւառներում, կենտրօնացած են դպրոցների շուրջը, իրանց բարի կամքի և հասկացողութեան հետ միասին չունեն նիւթական միջոցներ, որպէս զի էժանագին գրադարանների միտքը յղանալուց յետոյ, անմիջապէս ձեռնարկէին նրանց հիմնելուն:

Ահա թէ ինչու համար մեր յօդուածի սկզբում այն կարծիքը յայտնեցինք, թէ էժանագին գրադարան-ընթերցարանների հիմնելը կարելի է ընկերակցութեամբ, ընկերական սկզբունքների վրա հիմնած:

Մի որ և է գործի համար, լինի դա գրադարան, թէ մի այլ բան, 500—600 ռուբլի գումար հաւաքելը մի շատ հեշտ գործ պէտք է համարել այն դէպքում, երբ այդ գործի մէջ մասնակցում են մի քանի անձինք, մի քանի երիտասարդներ և օրիորդներ, և ամենքն էլ ոգևորված են նոյն մտքով և նոյն նպատակով: Էժանագին գրադարան-ընթերցարան հիմնելիս հարկաւոր գումարը կարելի է կազմել մի քանի կերպ. կամ գործին մասնակցող անձանց սեփական նուիրատուութիւններով, կամ ընդհանրապէս հանգանակութեամբ, և կամ ներկայացումների և երեկոյթների միջոցով:

Թէ Թիֆլիսում և թէ գաւառներում ամեն տարի տասնեակ ներկայացումներ և երեկոյթներ են տրվում բարեգործական նպատակով: Մեր զանազան քաղաքներում տարին տասներկու ամիս հանդակութեան թերթեր են պատեցնում յաճախ շատ անմիտ բաների համար.—ինչու ուրեմն չէ կարելի հասարակութեան նուիրատուութիւնները ծառայեցնել մի այնպիսի, համեմատաբար աւելի համակրելի գործի համար, ինչպէս է ժողովրդի համար էժանագին գրադարաններ հիմնելը: Եթէ հասարակութիւնը չէ մերժում օգնելու նուիրատուութիւններով կամ բարեգործական նպատակով կազմված ներկայացումներին յաճախելով այս և և այն դպրոցի աղքատ աշակերտին, այս և այն ուսանողին, այս և այն դպրոցի չինութեան, այս և այն դերասանին, կամ բարեգործական ընկերութեան մի ճիւղին, ինչու չը պէտք է կարծել, որ նոյն հասարակութիւնը աւելի համակրանքով կը վերաբերվի դէպի էժանագին գրադարանների գործը, որը համեմատելով ուրիշ շատ պէտքերի հետ, անհամեմատ աւելի բարձր և աւելի կարևոր է....

Մենք համոզված ենք, որ մեր ասածը մեծ հիմք

---

մէջ բնաւ չէ մտցնում բնակարաններ չինելու «ստատիան» և հոգ չէ տանում բանուորների ապրելու տեղի մասին:

«Կարիքը մայր չէ հարաղատ, նա կը ստիպի աղքատին անտանելին տանել և առանց բնակարանի էլ ծառայողներ շատ կը գտնվեն», մտածում են մեր հանքատէրերը և չեն էլ սխալվում... «Կարիքը մայր չէ հարաղատ» և մենք տեսնում ենք, որ մի կողմից առողջ, ամրակազմ մարդիկ գալիս են և մտնում գործի, միւս կողմից տկար, չորացած, կմախք դարձածները հեռանում ու ցրվում գաւառները, իրանց հայրենիքը, վարակելու և փչացնելու ուրիշներին էլ, թոյլ և տկար սերունդ ստեղծելու աղբիւր դառնալու....: Բնակարաններ չը կան. այն անտանելիներն էլ, որ կան քիչերի համար, գտնվում են այնպիսի վտանգաւոր տեղերում հրդեհի կողմից, ուր ապրելու համար մարդ պէտք է գլխից ձեռք վերցրած լինի:

Ահա նաւթի հորի կողքին շինված է այն տունը, որի մէջ ապրում է թշուառի մէկը իր ընտանիքով. նաւթ են քաշում և նաւթի մանր կաթիլներն անձրևի պէս թափվում են կտուրի վրա և հոսում, պատերով թափվում.... Մօտ է և խոհանոցը, ուր վառ է վառարանը. իսկ մեծ մասամբ նոյն տունը և խոհանոց է.... Ահա նաւթի շտեմարանը և նրա կողքին, բոլորովին կից, նոյնպէս նաւթով շաղախված տան մէջ ապրում է ընտանիք երեխաներով.... Մի փոքր անզգուշութիւն կրակի հետ և հրդեհի ճարակ պիտի լինեն շատ բան և շատերը:—Այդ բոլորին աւելացրէք այն հանգամանքը, որ հրդեհաշէջներ չը կան Բալախանիում, որ փայտեայ վիշկաները շատ տեղեր անասելի խիտ են, որ թէ այդ վիշկաները, թէ կից գտնվող շինութիւնները և թէ նոյն ինքն հողը նաւթով շաղախված են, որ հանքերը միմեանց հետ հաղորդող ճանապարհներ չը կան, որ եղած ճանապարհներն էլ գիշերները լոյսից զուրկ են... և սարսափով ու ակամայից կը համոզվէք, որ մի օր այս բոլորը կրակի ճարակ պիտի դառնայ:

Բնակարաններ չունենալով, մշակները ամիսներով էլ կերակրի համ չեն տեսնում, բաղնիք չեն գնում, ունեցած ցնցոտիները լուանում են իրանք իրանց ձեռքով ամիսը մի անգամ, այն էլ մեքենաներից ելնող շոգիներից գոյացած ջրերի հոսքերում, առանց օճառի, «գիլ» կոչվող կաւճակներում, առանց ոսկորի, ամիսը 4 ռուբլի 50 կոպէկով, ամենաշատը 5 ռուբլով ապրում է 25 տարեկան երիտասարդը, 40 տարեկան տղամարդը, 15 տարեկան երեխան մի այնպիսի երկրում, ուր հացի ֆունտը արժէ 5 կոպէկ, մսի ֆունտը 10—13 կոպ., մի ձուն 2—3 կոպէկ: Հեշտ է երևակայել թէ ինչ է այդ մարդկանց ամեն օրուայ ուտելիքը: Հաղնելիքի մասին խօսելն իսկ աւելորդ է,—նրանց տօն օրերի (ամբողջ տարվայ ընթացքում երկու տօն ունեն՝ Զրօրհնէք և Զատիկ) զարդն է շինելը, որը զինուորը մի տարի հաղնելուց յետոյ վաճառանոց է տանում ու ծախում...

Եւ այդ հաղարաւոր թշուառները ինչպէս կարող են ուրիշ կերպ ապրել, աւելի ծախսել, քանի որ թողել են տուն ու տեղ, հայր և մայր, ամուսին և փոքրիկներ և եկել են նրանց համար ապրուստի միջոց գտնելու, դէթ ուտելիքի համար փող աշխատելու...

Ամենավատ դրութեան մէջ են գտնվում հայ և պարսկաստանցի «համշարի» մշակները: Ցեղացի թուրք մշակը թէպէտ և ստանում է նոյնքան, որքան և առաջինները, այսինքն հայն ու համշարին, բայց տեղացին իր հայրենիքումն է. տունը մօտ է, և նա ցերեկվայ աշխատանքից յետոյ գնում է տուն, ուր նրա ծնողները, կամ կինը (եթէ ամուսնացած է) պարապում են տնտեսութեամբ, անասնապահութեամբ և թռչնապահութեամբ, որոնցից նա ստանում է մաքուր կաթ, ամիսը մի քանի անգամ ուտում է հաւ, ձու, նրա համար պատրաստում են կերակուրներ: Իսկ ով է զանգեզուրցի հայի կամ Պարսկաստանի թշուառ որդւոց համար կերակուր եփողը. նա ամեն ինչ փողով է գնում և եթէ կամենայ ամիսը մի քանի անգամ կաթի համ, մսի երես տեսնել, ձու ուտել, պէտք է միայն ու միայն իր գլուխը պահել կարողանայ, բայց նրանցից իւրաքանչիւրը հեռու

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱԻԹԱՔԱՂԱՔԻ ԿԵԱՆՔԻՑ

—

Ծանօթանալով Բալախանիի բաղմաթիւ մշակների կեցութեան հետ, մարդ մնում է շուարած և զժուարանում է հաւատալ իր աչքով տեսածին ու ականջով լսածին: Հաղարաւոր մարդիկ, ստանալով ամիսը 12-ից մինչև 15 կամ 18 ռուբլի, չունեն մի փոքր ի շատ տանելի բնակարան, և ապրում են այնպիսի ծակ ու ծուկում, ուր կարգին մարդիկ չեն պահի անասուն անգամ... Մի փոքր, ցեխոտ, անտանելի խոնաւ և կեղտոտ տեսնեակում ապրում են տասնեակ մշակներ, միմեանց վրա թափված, առանց անկողնի, 14—15 տարեկան երեխաներ մեծերի հետ միասին.... և նաւթի հորեր փորելու համար հարիւր հազարներ մսխող մարդիկ, խնայում են մի քանի հարիւրներ, այդ թշուառների համար դէթ բնակարանների նման մի բան շինելու...: Հանքատէրը գիտէ, որ հոր փորելու համար հարկաւոր է վիշկա շինել, դնել գործիքներ, մեքենաներ, շինել մեքենաներ ու կաթսաներ և այլն և այլն, և նա այդ ամենը գնում է ու շինում, բայց ծախսերի նախահաշուի

---

երկու տարի հաղնելուց յետոյ վաճառանոց է տանում ու ծախում...

Եւ այդ հաղարաւոր թշուառները ինչպէս կարող են ուրիշ կերպ ապրել, աւելի ծախսել, քանի որ թողել են տուն ու տեղ, հայր և մայր, ամուսին և փոքրիկներ և եկել են նրանց համար ապրուստի միջոց գտնելու, դէթ ուտելիքի համար փող աշխատելու...

Ամենավատ դրութեան մէջ են գտնվում հայ և պարսկաստանցի «համշարի» մշակները: Ցեղացի թուրք մշակը թէպէտ և ստանում է նոյնքան, որքան և առաջինները, այսինքն հայն ու համշարին, բայց տեղացին իր հայրենիքումն է. տունը մօտ է, և նա ցերեկվայ աշխատանքից յետոյ գնում է տուն, ուր նրա ծնողները, կամ կինը (եթէ ամուսնացած է) պարապում են տնտեսութեամբ, անասնապահութեամբ և թռչնապահութեամբ, որոնցից նա ստանում է մաքուր կաթ, ամիսը մի քանի անգամ ուտում է հաւ, ձու, նրա համար պատրաստում են կերակուրներ: Իսկ ով է զանգեզուրցի հայի կամ Պարսկաստանի թշուառ որդւոց համար կերակուր եփողը. նա ամեն ինչ փողով է գնում և եթէ կամենայ ամիսը մի քանի անգամ կաթի համ, մսի երես տեսնել, ձու ուտել, պէտք է միայն ու միայն իր գլուխը պահել կարողանայ, բայց նրանցից իւրաքանչիւրը հեռու

[illegible]

## ՅԱՎԱՏ ԴԱՎԱԴՅԱՆ

Ա. Ս.

[illegible]

## ՅԱՎՈՒՆ

—

ողջ քաղաքի ամբողջությունը սա է, ողջ, որ ես դարձյալ հրկիզեմ յուսալքված յուսաղեղը։ Մեր նախնիներ առաջ դիվաստան յուսաղեղը ոչնչացրեց։

—

Ամբողջ գիշեր ես դարձյալ հրկիզեցի ինձ։ Ամբողջ գիշեր ես դարձյալ հրկիզեցի ինձ։ Ամբողջ գիշեր ես դարձյալ հրկիզեցի ինձ։

—

Ինքն իրեն հրկիզող դիտիմն հաղորդագրությունը ստանալուց հետո Ամերիկայի Միացյալ Նահանգների Ազգային Գրադարանի տնօրենը հրամայեց գրադարանի բոլոր աշխատակիցներին հրկիզել գրադարանի գրքերը

Բելգիան պէտք է Կոնգոյին 20 միլիոնի փոխառութիւն անի, որոնցից 5 միլիոնը այժմ պիտի տրվի, իսկ ապա իւրաքանչիւր տարի 2 միլիոն տան տարվայ ընթացքում: Տան տարուց յետոյ Բելգիան իրաւունք ունի միացնել Կոնգոն իր երկիրներին: Նախագծի պատճառաբանութիւնների պարզաբանութեանը կցված է թագաւորի կտակը, որով նա տալիս է Բելգիային Կոնգոի վրա ունեցած իր բոլոր իրաւունքները, եթէ միայն Բելգիան դեռ իր կենդանութեան ժամանակ չի գերադասի աւելի մօտիկ կապեր հաստատելու Կոնգոի հետ:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 28-ին

| | | | |
|---|---|---|---|
| Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. . . | 86 ր. | — կ. |
| Բերլինի վրա 100 մարկ — . . . | 42 » | 25 » |
| Փարիզի վրա 100 ֆրանկ — . . . | 34 » | 15 » |
| Ոսկի — — արժէ . . | 6 » | 94 » |
| Մաքսային կուպոններ — . . . | 138 » | 75 » |
| Արծաթ — — — . . . | 1 » | 12 » |
| Բորսային դիսկոնտներ — . . . | 5 և | 6½% » |
| Պետ. բանկի 5% տոմս 1-ին չրջանի. | 100 » | — » |
| — — — — 2-րդ — | 99 » | 87 » |
| — — — — 3-րդ — | 99 » | 87 » |
| — — — — 4-րդ — | 99 » | 87 » |
| — — — — 5-րդ — | 99 » | 87 » |
| — — — — 6-րդ — | 99 » | 87 » |
| 6% ոսկեայ րէնտա . . . . . | 149 » | 25 » |
| 4% ոսկեայ փոխառութիւն . . . . | — » | — » |
| Արևելեան 5% փոխառ. 1-ին չրջ. | 100 » | 50 » |
| — — — 2-րդ — | 100 » | 62 » |
| — — — 3-րդ — | 100 » | 75 » |
| Ներքին 5% առաջին փոխառութ. | 231 » | — » |
| — — երկրորդ — | 215 » | 50 » |
| — — երրորդ ազն. կալ. բ. | 210 » | 75 » |
| Պետական. երկաթուղային րէնտա . | 100 » | 62 » |
| 5½% րէնտա . . . . . | 104 » | — » |
| 4% ներքին փոխառութիւն . . . . | 87 » | 12 » |
| 5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի | 99 » | 87 » |
| 4% վկայակ. գիւղ. հող. բանկի. . | 104 » | — » |
| 4½% դրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. . | — » | — » |
| — — — թղթադ. | 98 » | 12 » |
| Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիները. . | 95 » | 87 » |
| Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ. | 94 » | 87 » |
| Օդէսայի — — . | 96 » | — » |
| Թիֆլիսի — — . | — » | — » |
| Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. | — » | — » |
| — — Քութայիսի — — . | — » | — » |

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը հանդարտ է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐԻՑ

և Քութայիսեան գաւառներում ֆիլոկսերա է երևացել խաղողի վազերի վրա, որոնք գտնվում են 14 զանազան գիւղերում և Քութայիս քաղաքում: Այնպէս որ այդ հիւանդութիւնը բուն է դրել 80 վերստ տարածութեան վրա Մինգրելիայի սահմանի վրա գտնվող Մատխօնջա գիւղից մինչև Պերովէնի գիւղը, չիատուրեան մարգանեցի հանքի մօտ և Թիֆլիսի նահանգի սահմանից 25 վերստ տարածութեան վրա: Վարակված այգիները մեծ մասամբ արդէն չորանում են, և միայն մի քանիսները, որոնք դեռ նորերս ենթարկվեցան ֆիլոկսերայի աղդեցութեանը, պահպանում են առ ժամանակ իրանց սովորական արտաքին տեսքը: Վազերի համար ամենավտանգաւոր հիւանդութեան այդպիսի տարածումը,—որը, չը նայելով ձեռք առած միջոցներին դրա դէմ, դեռ չարունակվում է,—սարսափում է նահանգական վարչութեանը զգուշացնել Թիֆլիսի նահանգի պ.պ. այգետէրերին սպառնացող չարիքի մասին և հրաւիրել նրանց որպէս զի իրանք իրանց կողմից զգուշութեան ամեն միջոցներ ձեռք առնեն, և ամբողջապէս յոյս չը դնեն միայն վարչութեան վրա, որը, առանց բնակիչների մասնակցութեան, անզօր է աջողութեամբ դիմադրել այդ չարիքի տարածման: Այդ տեսակէտից, նախ և առաջ պարտաւորութիւն է դրվում նրանց, ում հարկն է, ձեռք չը բերել վերոյիշեալ նահանգում (որի ամբողջ տարածութիւնը, հաշուելով Սուխումի և Բաթումի չրջանները ևս, ֆիլոկսերային տեսակէտից կասկածելի է համարվում) վազեր և վազերին վերաբերեալ զանազան պատկանելիքներ, իսկ վարակված տեղերից ձեռք չը պէտք է բերել ամեն տեսակ բոյսեր, խոտ և յարդ, բացի հացահատիկից և թութունից չորացրած տերևների ձևով: Մի և նոյն ժամանակ չը պէտք է թոյլ տալ, որ Քութայիսի նահանգից տանվեն հող մշակելու զանազան գործիքներ, որպէս են թիեր, քլունգեր և այլն: Թէ այդ վերջին նպատակին հասնելու համար, և թէ վազերը և վերոյիշեալ զանազան առարկաները նահանգը ներս բերելուն առաջն առնելու համար, անհրաժեշտ է առանձին ուշադրութեամբ հսկել Քութայիսի նահանգն եկող այգեպանների և բանուորների վրա, որոնք,—որպէս փաստերը վկայում են,—յաճախ դալիս են հէնց այդպիսի առարկաներով: Այդ թախանձանքով խորհուրդ է տրվում տէրերին, որպէս զի այն այգիների մասին, ուր վերջին 10—15 տարիներում խաղողի վազեր էին բերվում Քութայիսի նահանգից կամ արտասահմանից, նոյնպէս այն կասկածելի այգիների մասին, որոնց մէջ վազերը առանց յայտնի պատճառի չորանում են, առանց յետաձգելու իմաց տան կամ տեղական ոստիկանութեան գլխաւորին, կամ Թիֆլիսի նահանգի պետական կալուածների վարչութեանը, կամ նահանգապետի դիւանատանը կամ անմիջապէս Կովկասեան ֆիլոկսերային մասնաժողովին, որպէս զի միջոցներ ձեռք առնվեն մասնագէտների ձեռքով հետազօտելու այդպիսի վազերը:

Վերջապէս պ.պ. այգետէրերին և ուրիշ անձանց նորից յայտարարվում է, որ այսպիսի առաջնակարգ նշանակութիւն ունեցող գործում եթէ իշխանութեանը միահամուռ և ջերմ գործակցութիւն չը ցոյց տան իրանք այգետէրերը, ֆիլոկսերային հիւանդութիւնը շուտով բուն կը դնի նահանգի այս կամ այն տեղում և դրա տարածման հետևութեան պատճառով, ոչ միայն կը ոչնչացնի բազմաթիւ մասնաւոր մտաստութիւններ, այլ և ժողովրդական թշուառութեան չափեր կընդունի, որը կորստաբեր վտանգ է պարունակում այն պատճառով որ դրա կորստաբեր հետևանքները մանաւանդ շատ զդալի կը լինեն երկար տարիների ընթացքում:


# ՍԱՐԱՋԵՎԻ ՔԱՐԱՎԱՆՍԱՐԱՆ

(ՄԻՋԻՆ ՓՈՂՈՑՈՒՄ)

ԿԱՊԱԼՈՎ Է ՏՐՎՈՒՄ

Պայմանների մասին կարելի է տեղեկանալ քարավանսարայի տիրոջից, որի հասցէն հետևեալն է. Старо-Арсенальная улица, домъ Гамазова, № 56, во дворѣ.

3—3

ՄԻԶՈՑ ԽՄՐԲՈՒԽԻ ԴԷՄ

բժշկական դէպարտամէնտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում:

15—52 (Շ.)

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՄ պ. պ. սիրողներին լաւ

ԾԽԱԽՈՏ

և

ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

իմ գործարանից, որը վաղուց վայելում է հասարակութեան ուշադրութիւնը:

ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ

ճշդութեամբ, խստութեամբ և գործ ածողների ճաշակով են կատարվում:

—

Մագազինում կարելի է գտնել ծխելու համար ամենալաւ գործիքներ և նիւթեր:

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ն. Յ. ԲՈԶԱՐՋԵԱՆՑԻ

Գործարանը. Գուդովիչ փողոցում, Սոլոլակում, սեփական տանը:

Մագազինը Դվորցովայա փողոցում, կալուածական բանկի տանը:

Ոսկեայ մեդալ

Ոսկեայ մեդալ

Ուշադրութիւն եմ հրաւիրում մանաւորապէս մագազինում եղած ԹԻՒՐԲԱՑ և ՏԵՂԱԿԱՆ ամենալաւ յատկութեան և զանազան տեսակի Թարմ Ծխախոտի մեծ քանակութեան վրա:

—

Օտարերկրեայ պատուէրները կատարվում են անմիջապէս:

Մեծ քանակութեամբ առնողներին անվում է զիջում, պայմանին համեմատ:

3—10 (2.)

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ

ТОВАРИЩЕСТВО

МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА

# БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и зоводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовокъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣм. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабель «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелѣзныхъ дорогъ.

Складъ локомобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клйетонъ и Шутлівортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

## Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго училища кв. № 8.

15—100 (Ն. 2.)

# ПОЖУГОДОВАЯ ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

# „КАСПІЙ"

ОТКРЫТА

ПОДПИСНАЯ ЦѢНА:

| Съ доставкой въ Баку: | | Съ пересылкой въ другіе города: | |
|---|---|---|---|
| На полгода. . . . . | 4 р. | На полгода. . . . . | 5 р. |
| „ 3 мѣсяца . . . . . | 2 „ 50 к. | „ 3 мѣсяца . . . . . | 3 „ |
| „ 1 мѣсяцъ . . . . . | 1 „ — | „ 1 мѣсяцъ . . . . . | 1 „ 50 к. |

За границу: на полгода—7 р., 3 мѣсяца—4 руб.

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи въ Баку, уголъ Армянской и Губернской улицъ, домъ Красильникова.

Въ Тифлисѣ подписка на газету, пріемъ объявленій и розничная продажа номеровъ производятся при книжномъ агентствѣ Хиддекеля.

Въ Боржомѣ розничная продажа №№ „Каспія" производится въ конторѣ „Минеральныя воды".

За перемѣну адреса просятъ высылать 5-ть семикопѣечныхъ марокъ, безъ чего адресъ перемѣненъ не будетъ.

2—3.


Дозволено цензурою, Тифлисъ 29 Іюня 1890 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.